

ՂԱՓԱՆԻ ԲԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ

Աւգայիկի

ՋԱՆԳԻԼՈՒՄՆԵՐ

Թոռը կկեայ, արև կանէ,
Մըշաբաղ տիրև կանէ.
Ընեբակ էն քըւերը,
Ախպէրը օրուն կանէ:

Մաչքդ պերակ-շմալ ա,
Կոժդ ծանդր՝ ճըմալ ա,
Քու ալազեօղ աչքերդ
Իմ արունս խմալ ա:

Ասօր թոխպ ա, թոռ կկեայ,
Պիւլուր քարերը փոլ կկեայ.
Հու որ մին եարը չօնէ
Մալուր-մուշկիւն շոռ կկեայ:

Ջրին յդէն քըրքարուտ,
Քաթան լեչակը ծըռծառուտ:
Ախչի, պեր թոշադ պաչիմ,
Վըրերթերը տանիք արուտ:

Ախչի, քիսի կալաւը,
Կիրմիրի կտայ հալաւը,
Կասիս թա դըպիտ եշիս
Մըն տղայ կընգնէ կոլաւդ:

Լըմընգան տիւս ա եկալ,
Մըն ախչիդ տէս ա եկալ,
Օ՞ղալ ըմ թա թոշան պաչիմ,
Չամչիգաւ ըռխէս ա եկալ:

Տոնմ շինալ դանանա,
Ղարդու կտամ տըմանայ.
Ախչի, տու մըն ցորտ ախպուր
Խմիմ սերտս հըվանայ:

Ըստաքանս մընըկէս,
Ածիր-խմիք մընըկէս,
Վընսկաւ բարաբար,
Ըրծաթաւ մընըկէս:

Սարէն երան սար չի ընիլ,
Հոփի ծառէն բար չի ընիլ.
Բալադ մեռնէ մյ սաքար,
Սէլ-սերածէն ճար չի ընիլ:

Թըխպալա՝ թոռ չի եկալ,
Մըթնալ ա՝ տոն չի եկալ,
Դօշակը քցալ ըմ, պերծը տըրալ,
Ըչքերէս քոն չի եկալ:

Հարայ-հարայ հըրենէս,
Հըսկըհանած կիրենէս.
Ջահդ ըրա, ջառան պեր,
Դոնմիշ ա ըլալ եարենէս:

Կընշիմ արանէն,
Շուշա կապիմ կերանէն՝
Հու որ ինձ եաման տա՛ն
Եաման փսնէ պերանէն:

Ա՛խչի, անուսդ Թամի,
Լեչակդ քամէն տանի,
Տու մեր տան հարթնը բեղար,
Իմ հար քո հօր խնամի:

Վընն ըմ կացած ցեքէն պտկէն,
Գող ըմ կերծում թեքէն պտկէն՝
Ասիս թա ինձանա ետ տեռնաս,
Գիւլլան տայ թոքէդ պտկէն:

Արի ըմ կապած կեալիս ա,
Նըքար մաչին լելիս ա.
Ա՛խչի Նար, խէ՛ լելիս ըս,
Շամիբ հարդ կեալիս ա:

Սըրերէն քեդ չի ընիւ
Ազափ տըղէց քեդ չի ընիւ
Սերած սիրածէն չտուղէն
Էն դունիումը տեղ չի ընիւ:

Ա՛խչի, ախչի, ալ ախչի,
Աչքերը չալ-չալ ախչի,
Եա տու իմ նշանած բեղար,
Եա իմ քուր քու տալ, ախչի:

× Ա՛տղայ, ա՛ տղայ, շան տղայ,
Գողէն տակէն քոն տղայ,
Իմ մար քեդ ախչիկ չի տալ,
Տեղադ երկաց, տէն տղայ:

Մոտը տիւս քցիմ յղէն,
Թուշ քինիմ ըսլար տղէն,

Եր օնիմ օխցէն լըղէն
Պահիմ դիւշմանէն տղէն:

Ա՛տղայ, տղայ, կալը տես,
Եայլուխադ սարը տես,
Իմ մար քեդ ախչիկ չի տալ,
Վախտէն կըլխէդ ճարը տես:

Տանս տակէն կան շըլորի,
Ճըղները ետ հըլորի.
Ինքի թա ետրս տակաւը ընցնէ
Բեղերը ետ հըլորի:

Ղըլէն յղէն սառալ ա,
Մանները շուշա տարալ ա,
Կեարմուր եախա, թոխ չոխա
Օշա-խելքս տարալ ա:

Գիւլքայ կանիմ խաշար ա,
Երգեղեցուն զանշար ա,
Ադի, քու կարգէդ մեռնիմ,
Ո՛ք մունթերդ մաշալ ա:

Էա ճըրմալս կան կաշի,
Եալլըմը եալլիբաշի,
Էա մըն թուփ տըղէցս մաչին
Իմ հարս ա իւղբաշի:

Վարս տիւս կքցեմ յղէն
Իմ սկեսուր խմէ օխցէն լըղէն,
Իմ ջանս մատաղ ընի
Իմ ըսկըսւեր մաչնակ տըղէն:

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

I. ՉԱՐ ԱԶԳԻ.

Ա.

Թ՛հւ չմը աչքը,

Չմը նիաթը,

Չմը սհաթը.

«Ա՛ պիղծ, դձւ ես».

— Ես եմ.

«Ո՛ւր ես գնում».

— Գնում եմ ծառը.

«Ծառին ճիւղնը չկայ,

Ճիւղնին տերեւ չկայ,

Ծիծո մարդին լեղին քաղեմ.

Խորանդին ծովը

Մայրամ Աստծոյ աղօթքովը

Քրիստոսայ հրամանքովը

Թ՛հւ չմը աչքը,

Չմը նիաթը,

Չար սհաթը.

Տէր մեր Յիսուս, Քրիստոսաւ

Բ.

«Ա՛ Գողտ»

— Ես եմ.

«Չմը աչքը, չմը սհաթ,

Հձւր ըս ուրթում».

— Ուրթում եմ ծառը.

«Ծառուն ճողնը չկան.

Ճողնուն տերեւ չկան.

Իլլիմ մարդու գլոխ,

Ծուծում լեղէ.

Նու ընես անդ տոնդ

Վեզդ մանդի,

Մաչքդ կտարի,

Քիցիմ խորոնդուն ծավը,

Քրիստոսայ հարի մեղաւը,
 Մէյրամուն աղօթքաւը,
 Քրիստոսայ հրամանքաւը,
 Յիսուս, Քրիստոսուս, Աստիւծ:

Գ.

(Մեղրեցոց բարբառով)

Իրիք-իրիք գեցալ ըն վար.

Իզնի հինչ իլալ՝ կարիճ.

Ճըպատը հինչ իլալ՝ օղձ.

Օղձուն փուրաւը մին աղ ու մու-

խեր

Սև քարէն ցիքիմ,

Սև սալէն ցիքիմ,

Յոյս Մարիաս,

Կոյս Մարիամ,

Կամ Աստուծոյ

Յիսուս, Քրիստոսուս, Աստուծ:

Դ.

Հալա լարթամ,

Ճեղն օնէ, տիրեւ չօնէ,

Չար մարդին խօսքը չօնէ.

Տըղնըհոռէ դընդանէ,

Պուրուտին փորումը.

Չար մարդին խօսքը,

Վըսկեռան մես տիւս կկեայ.

Չար մարդուց՝ խօսքը տիւս
 կկեայ:

Ե.

Հալան լերթ ա.

Հերթ ա լալան.

Ճեղնը չկայ.

Ճեղանը տիրեւ չկայ.

Չար մարդկանցը խօսքը չկայ,
 Պրուտէն փռոնաւը
 Ջընդընորէն փռոնաւը
 Վըսկեռէն տիւս կեայ միսը,
 Մըսէն տիւս կեայ, տիւս,
 Չար մարդը, չար աչքը, չար
 նիաթը,
 Չար սըհաթը, թիւ չար աչքը:

2.

Չար աչքը չար յղէննի,
 Չար աչքը սև սալի.
 Կեապուտ քար ա.
 Չար աչքը
 Օղջէն մըրմունջը.
 Չար աչքն ալ չար յղէննի,
 Չար աչքը չար մարդը:

II. ՍՐՏՏԸՄԱՅԻ.

Ա.

(Մեղրու բարբառով)

Շէնին ձուրուժը մին ծափ
 կան,
 Մալուն մանջին մին ծառ կան,
 Մառուն վերան մին ծեռ կան.
 Մետը առանց մըրթիւու իփալ ըն,
 Առանց իփիլու կերալ ըն.
 Աս մարդը սըրտըմաւ ա
 Կապետ աման, կըժըզլոխ,
 Յիսուս, Քիւրիստուս, Աստուծ:

Բ.

(Նոյն բարբառով)

Տեղս ծաւ կան
 Մառուն մանջին ծառ կան.

Մառուն վերան բուն կան.
 Բունուն մանջին դուշ կան,
 Ղուշն անղենակ մուրթիլ,
 Անշէնփուռ նիշերիլ,
 Անգիրեկ խըրաւիլ,
 Անքերան օտիլ.
 Սէրտըմուն գեղը յիւնչ.
 Կըժը գլոխ, պըղըտէ ասուղ,
 Ըրկաթէ քար:

III. ՄԻՋԿԱՊԻ

(Մեղրի բարբառով)

Անանիա, Ազարիա.
 Դեցալ ըն Ազարիա սարը,
 Քառասունեօխտը իշաւուր,
 Քառասունեօխտը Ղուրաւուր,
 Քառասունեօխտը ձիաւուր,
 Քառասունեօխտը օղտաւուր,
 Կտրալ ըն կանենչ տիրիւը.
 Աս հէյւանս գիւղկապ ա
 էտ արիւ:

IV. ՄԻՐՏ ԶԱՓԵԼՈՒ.

Ճրագ, ճրագ ճմարիտ,
 Անմահական մարգարիտ.
 Մեր տունը երկաթի ա,
 Պատերը պողկատի ա.
 Շողատոնը մին ա,
 Յիսուս մէջին բնեւ ա,
 Հրէս եկաւ երեք ծիաւեր,
 Մէկը Յիսուս, մէկը Քիւրիս-
 տուս, մէկը Աստուծ: